

ՀՏԴ 82(091), 891.99.092

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1921–1923 թթ.)**

Մալոյան Ա. Մ.

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հ. Թումանյանի կյանքի ու գործունեության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված մի ժամանակաշրջանի պատմությունը: Խնդիր ենք դրել արխիվային փաստաթղթերի, այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների համադրությամբ և վերլուծությամբ լուսաբանել հայ մեծ բանաստեղծի հասարակական գործունեության վերջին տարիները, որոնք կապված էին Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծման ու կայացման ժամանակաշրջանի հետ: Հոդվածում վերլուծել ու ներկայացրել ենք Հ. Թումանյանի հասարակական գործունեությունը 1921–1923 թթ.:

Բանալի բառեր. Հ. Թումանյան, 1921–1923 թթ., Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), հասարակական գործունեություն, ՀՄՄՀ, 1921 թ. սեպտեմբերի 15:

Հ. Թումանյանի կյանքի ու հատկապես հասարակական գործունեության վերջին շրջափուլը (1921–1923 թթ.) համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Այս հոդվածի շրջանակներում փորձել ենք լրացնել Հ. Թումանյանի հասարակական գործունեության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված ժամանակաշրջանի պատմությունը: Արխիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների համադրությամբ ու վերլուծությամբ և պատմահամեմատական ու տրամաբանական մեթոդների կիրառմամբ լուսաբանել, ներկայացրել ու գնահատել ենք հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի հասարակական գործունեության վերջին տարիները (1921–1923 թթ.), որոնք կապված էին Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ստեղծման ու կայացման ժամանակաշրջանի հետ:

Հայ ժողովրդի բնավորության յուրահատուկ, լավագույն հատկանիշներն իր ներսում բյուրեղացրած, հարազատ ժողովրդի էությունը, աշխարհայացքը, աշխարհագրագույն լավագույնս ճանաչած ու իր գրական հերոսների կերպարներով ներկայացրած ամենահայ հանճար Հովհաննես Թումանյանը սիրված ու հարգված, անառարկելի հեղինակություն ու հանճարեղ էր ամենուրեք, բոլոր բնագավառներում: Հ. Թումանյանը հայոց պարծանքն է, հայ ազգի նվիրյալ զավակը, որն իր ազգին անմնացորդ ծառայեց հոգով ու սրտով, բանիվ և գործով, ամբողջ էությամբ:

Ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանը հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվելու առաջին քայլերը կատարել է 1880-ական թվականների վերջերին [1, էջ 51]:

Իր հետագա ամբողջ գիտակցական կյանքում Հ. Թումանյանը շարունակեց զբաղվել ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությամբ և անձնվեր ու անմնացորդ ծառայեց հայրենիքին ու հայությանը: Հասարակական գործչի թումանյանական ունակություններն առավել ամբողջական ու բազմակողմանիորեն դրսևորվեցին Առաջին աշխարհամարտի եղերական ու դրան հաջորդող դժնդակ տարիներին: Նա, սթափ և ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, կողմնորոշել է Ազգային բյուրոյի¹ աշխատանքները, արդյունավետորեն կազմակերպել հայրենագուրկ արևմտահայության խլյակների փրկության ու ողբերգական վիճակի վերացման գործը [2, էջ 11, 3, 4, 5, 6]: Թումանյանը շրջահայաց գործիչ էր, նա յուրահատուկ իրատեսորեն, խորաթափանցորեն է պատկերացրել պատմական ժամանակաշրջանը և նրբանկատորեն, մեծ զգուշությամբ է վերաբերվել

¹Ազգային բյուրոն (Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո) ստեղծվել է Ռուսական կայսրության հայաշատ վայրերի ներկայացուցիչների համագումար-խորհրդակցությունում 1912 թ. հոկտեմբեր-նոյեմբերին: Մասնակցել են Թիֆլիսի, Երևանի, Բաքվի, Ախալցխայի, Նոր Նախիջևանի, Արմավիրի, Բաթումի և հայաշատ այլ վայրերի պատգամավորներ: Համագումարի նպատակն էր՝ օգտվել 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմների հետևանքով ստեղծված բարենպաստ իրադրությունից և հասնել Հայկական հարցի լուծմանը: Ընտրվել է 7 հոգուց կազմված Ժամանակավոր բյուրո (Ս. Հարությունյան, Ա. Խատիսյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հ. Թումանյան, Ն. Աղբալյան), որը վարելու էր ընթացիկ գործերը: Առաջին աշխարհամարտի տարիներին Ազգային բյուրոն կազմակերպել է հայկական կամավորական զորագնդեր, զբաղվել արևմտահայ գաղթականներին տեղավորելու և նրանց պարենով ապահովելու հարցերով: 1917 թ. հոկտեմբերից, Հայ ազգային խորհրդի ստեղծումից հետո, Ազգային բյուրոն դադարել է գործելուց:

ազգային խնդիրներին: 1916 թ. աշնանը Թումանյանը ձեռնամուխ է լինում «Հայկազյան ընկերության» ստեղծման նախապատրաստական աշխատանքներին² [7]: Բանաստեղծը ազգանպաստ մեծ գործունեություն է ծավալում հատկապես «Հայոց հայրենակցական միությունների միության» նախագահի պաշտոնում³, իսկ 1918–1919 թթ. գլխավորում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով»-ի աշխատանքները⁴:

1921 թ. Խորհրդային Հայաստանի ժողովուրդների նախագահ և ռազմական գործերի ժողովու Ալ. Մյասնիկյանի հրավերով բանաստեղծը գալիս է Երևան՝ Հայաստանի օգնության կոմիտե հիմնադրելու համար: Երկրի անմխիթար վիճակից մտահոգ մի շարք հասարակական գործիչներ, ակնավոր մտավորականներ 1921 թ. դիմում են ՀՄԽԸ ժողովուրդներին՝ հասարակական կազմակերպություն ստեղծելու

²1917 թ. ապրիլի 22-ին «Հորիզոն» թերթում Հ. Թումանյանը Հայկազյան ընկերության նպատակների մասին գրում է. «Ընկերություն, որը կոչվելու է Հայկազյան, իբրև մոտավոր նպատակ՝ միտք ունի կազմել «Հայոց ակադեմիա», դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը և ամենակողմանի ուսումնասիրել մեր աշխարհքը, մեր հին ու նոր կյանքը, մեր գրականությունն ու գեղարվեստը, նրա պատմությունն ու արդի կյանքը և ապահով վիճակի մեջ դնել գիտնականներին, գրողներին ու գեղարվեստագետներին: Միաժամանակ Հայկազյան ընկերությունը հետևելու է մեր կուլտուրական հիմնարկությունների գործունեությանը և նրանց օժանդակելու կարիք եղած ժամանակ»:

³1917-1918 թթ. գրեթե բոլոր հայահոծ համայնքներում ու գաղթօջախներում գործում էին «Հայրենակցական միություններ», որոնք զբաղված էին Առաջին աշխարհամարտից տուժած հայրենակիցներին ու ծովացյալ գաղթականներին օգնելու, ապաստան տրամադրելու, հանգանակություններ հավաքելու, տարբեր կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու և կարոտյալներին աջակցելու գործով: Այդ աշխատանքները կենտրոնացնելու և նպատակային ու ճիշտ կազմակերպելու մտայնությամբ 1918 թ. մարտին Թիֆլիսում ստեղծվեց «Հայոց հայրենակցական միությունների միություն»-ը, որի խորհրդի անդամ ընտրվեց Թումանյանը:

⁴1918 թ. հոկտեմբերի 31-ին Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ Թիֆլիսում կայացած Հայոց հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստում որոշվում է Փարիզի Հաշտության վեհաժողովին հայ ժողովրդի կողմից մի հուշագիր կազմելու և ներկայացնելու համար ընտրել հանձնաժողով: Նոյեմբերի 21-ին ստեղծված «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով»-ի նախագահ է ընտրվում ամենայն հայոց բանաստեղծը: Նրա գլխավորությամբ հանձնաժողովը կարճ ժամանակահատվածում կատարում է հերոսական աշխատանք. կողոպտված ու անօթևան հազարավոր հայ գաղթականներից հավաքում, խմբավորում, իրավական տեսքի է բերում հսկայածավալ փաստական նյութ և դրանք տրամադրում Փարիզում հրավիրվելիք Խաղաղության վեհաժողովի պատվիրակությանը:

խնդրանքով, որը, նախևառաջ, պետք է միջոցներ հայթայթեր սովի ու համաճարակի ճիրաններում հայտնված ժողովրդին փրկելու համար: 1921 թ. սեպտեմբերի 15-ին ՀՍԽՀ ժողովուրդին ընդունում է Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ) ստեղծելու մասին դեկրետ [8; 9; 10, էջ 21]: ՀՕԿ-ի հիմնադիր անդամներ են դառնում 77 հոգի, որոնք պետական և հասարակական երևելի գործիչներ էին, բժիշկներ, ականավոր մտավորականներ՝ Մ. Աբեղյանը, Ալ. Բեկզառյանը, Ս. Տեր-Փաբրիկյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Երզնկյանը, Հ. Թումանյանը, Ս. Կասյանը, Ռ. Մելիքյանը, Ստ. Մալխասյանը, Նար-Դոսը, Ս. Սարյանը և ուրիշներ: ՀՕԿ-ի ստատուտը (կանոնադրություն) հաստատվում է ՀՍԽՀ ժողովուրդի 1921 թ. սեպտեմբերի 15 (28)-ի դեկրետով [11]: Սեպտեմբերի 20-ին՝ ՀՕԿ-ի հիմնադիր ժողովի վերջին նիստին, Ալ. Պապովյանը կարդում է նախագահության խմբագրած շրջաբերականը, իսկ Հ. Թումանյանը ներկայացնում է իր իսկ հեղինակած և նախագահության խմբագրած կոչը, որում մասնավորապես ասվում է հետևյալը. «Աշխարհի ամեն կողմը ցրած հայ ժողովուրդ.

Լսի՛ր:

Քեզ է կանչում Հայաստանի Օգնութեան Կոմիտեն:

Քեզ է կանչում Հայաստանի մայրաքաղաքում գումարած ամեն հոսանքի հայ գործիչների ու գրականագետների ժողովը:

Եւ գուցէ երբէք դու չես լսել նրանց ձայները այնպէս միացած ու միահամուռ:

Եւ այսքան մեծախորհուրդ մի վայրկենի:

Լսի՛ր:

Դարաւոր մաքառումներից յետոյ, համաշխարհային պատերազմի թոհուրոհից, լայնածաւալ ալեկոծութիւնների և աղետների ծովից գերագոյն ճիգերով բարձրանում է Ազատ ու Անկախ Հայաստանը:

...Արդ, լսի՛ր Հայութիւն, ուր էլ որ լինիս, Երոպայից մինչև Ամերիկա, Եգիպտոսից մինչև Հնդկաստան, և ամենուրեք, լսիր քե՛զ կանչող հայրենիքի ձայնը և շտապի՛ր օգնութեան ամեն բանով, ինչով կարող ես, որ վաղը ունենաս ա՛յն, ինչ որ երազել ես դարերով – ազատ ու շէն հայրենիք»⁵ [12; 13; 14, էջ 411-413]:

Հ. Թումանյանին առաջարկում են կոմիտեի նախագահի պաշտոնը: Նա խնդրում է իրեն ազատ թողնել գրականությամբ զբաղվելու համար,

⁵«Կարմիր աստղ» թերթում տպագրված Կոչը կրում է որոշակի խմբագրական փոփոխություններ և ոչ էականորեն տարբերվում է ԵԼԾ-ում տպագրված Կոչից:

սակայն շրջելով Երևանի փողոցներով և տեսնելով ծանր ու դաժան պատկերներ՝ բանաստեղծը, Լեռնի վկայությամբ, այսպես է ասում. «Երբ մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան և գնալ նրան փրկելու» [15, էջ 104; 16, էջ 253]: Այդպես Թումանյանը դարձավ ՀՕԿ-ի նախագահ: Այս գործը վերջինն էր, որ Թումանյանը հասցրեց անել հայրենիքի համար: Այսպիսով՝ ՀՕԿ-ի գլխավոր վարչության առաջին պատվավոր նախագահը հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էր, որը, սակայն, բնակվելով Թիֆլիսում, հնարավորություն չունեցավ ստանձնելու ՀՕԿ-ի անմիջական ղեկավարությունը: Դրա համար էլ ՀՕԿ-ի անմիջական ղեկավարությունը վստահվում է ՀՄԽՀ հողժողովում Ա. Երզնկյանին: ՀՕԿ-ի հիմնադիր ժողովում Ա. Երզնկյանը միաձայն ընտրվում է ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ [17; 10, էջ 22]:

Թումանյանի ջանքերով 1921 թ. հոկտեմբերին Թիֆլիսում բացվում է ՀՕԿ-ի մասնաճյուղ [14, էջ 665], և անմահ լոռեցին անձնուրաց նվիրումով նպաստեց ՀՕԿ-ի կայացմանն ու Հայաստանի ապաքինմանը և բարգավաճմանը: 1922 թ. ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղեր են ստեղծվում Մոսկվայում, Բաքվում, Թեհրանում, ապա նաև Բաթումում, Կիևում, Խարկովում, Օդեսայում, Ցարիցինում (այժմ՝ Վոլգոգրադ), Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի, ԽՍՀՄ գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում, 1924–1925 թթ.՝ Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Լատինական Ամերիկայի մի շարք քաղաքներում, Մերձավոր Արևելքում, Իրանում (Թավրիզ), Եգիպտոսում, Ալժիրում և այլուր: ՀՕԿ-ի եկամուտները գոյանում էին անդամավճարներից, հրատարակումներից, նվիրատվություններից, կտակներից և այլ աղբյուրներից: Հայրենիքի շուրջը սփյուռքահայությանը համախմբելու գործում կարևոր դեր են կատարել ՀՕԿ-ի պարբերականները և այլ հրատարակություններ:

Հսկայական էր Հ. Թումանյանի ներդրումը ՀՕԿ-ի հեղինակության բարձրացման ու հայության մեջ, հատկապես՝ սփյուռքահայության, ՀՕԿ-ի նկատմամբ մեծ վստահություն ապահովելու գործում: Թեև հանձարեղ բանաստեղծ ու մեծ մարդասեր Թումանյանը, որն արդեն վատառողջ էր ու հիմնականում բնակվում էր Թիֆլիսում, հնարավորություն չունեցավ շատ ժամանակ տրամադրելու և անմիջականորեն ղեկավարելու ՀՕԿ-ի աշխատանքները, այնուամենայնիվ, Հ. Թումանյանի նախագահության տարիներին ՀՕԿ-ը,

իր առջև դրված նպատակների իրականացման շրջանակներում, օգնում է Խորհրդային Հայաստանի սովյալ բնակչությանը, օժանդակում շինարարությանը, կապեր հաստատում ու սերտացնում հարաբերությունները աշխարհով մեկ սփռված հայ տարագիրների ու հայկական համայնքների հետ, նրանց համախմբում հայրենիքի շուրջը: Ստեղծումից անմիջապես հետո ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն անհապաղ ձեռնամուխ եղավ սփյուռքահայ համայնքների հետ կապեր հաստատելու գործին: Մփյուռքի ու խորհրդային հանրապետությունների հայ համայնքներին ուղարկած շրջաբերականներով ՀՕԿ-ը կոչ էր անում շուտափույթ օգնել մայր հայրենիքին: Այդ նպատակով 1921թ. աշնանը ՀՕԿ-ը կազմակերպում է Հ. Թումանյանի և Ե. Թադևոսյանի գործուղումը Կ. Պոլիս: 1921թ. հոկտեմբերին Հ. Թումանյանը նամակով դիմում է արտասահմանում գտնվող Ավ. Իսահակյանին ու Ա. Չոպանյանին՝ նրանց հորդորելով մասնակցել Եվրոպայում ՀՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծելու աշխատանքներին [10, էջ 23, 27]: Հ. Թումանյանը գործում էր մեծ ոգևորությամբ, լավատեսորեն էր տրամադրված ու վստահ էր ՀՕԿ-ի նպատակների իրագործմանն ու արդյունավետ գործունեությանը: Դա երևում է հատկապես Թումանյանի հետևյալ տողերից. «Նշանակալից երևույթ է, որ, իրարից անկախ ու անտեղյակ, նման մարմիններ [իմա՝ ՀՕԿ-ի մասնաճյուղեր – Ա. Մ.] են առաջ գալիս և մեր գաղութներում: Էս նշանակում է, թե կենդանի է հայությունը:

Կենդանի է և ուժեղ: Երևանից սկսած մինչև հեռավոր գաղութները շարժվում է նա դեպի հայրենիք:

Ինչքան էլ խոչ ու խութեր, ինչքան էլ դժվարություններ ու թշվառություններ հանդիպեն ճանապարհին, նա հասնելու է իր նպատակին:

Հայաստանի ազատ հողի վրա նա շինելու է իր ազատ ու առատ տունը, Հայկական բարձրավանդակի վրա զարգացնելու է իր ազգային հանճարը և իր խոսքն ասելու է աշխարհքին» [11; 18, էջ 431-432; 14, էջ 415]:

Հ. Թումանյանի նախագահության տարիներին զգալի էր ՀՕԿ-ի օգնությունը գիտական ու կրթամշակութային օջախներին՝ հանրային գրադարանին, թատրոններին, բուհերին, թանգարաններին: Պայմանագրեր էին կնքվում գիտության, գրականության և արվեստի գործիչների հետ, որոնք իրենց ստեղծագործություններում պետք է ներկայացնեին Խորհրդային Հայաստանի ներքաղաքական կյանքի

տարբեր ոլորտները՝ նպատակ ունենալով աշխարհին ծանոթացնելու վերականգնվող Հայաստանի նվաճումներին [19, էջ 203-205; 20, էջ 169-170]:

1920-ական թթ. սկզբին ՀՕԿ-ի տրամադրած գումարներով իրականացվում են հայրենադարձներին [10, էջ 89] բժշկական օգնություն ցուցաբերելու, պարենով, աշխատանքով և ապաստանով ապահովելու միջոցառումներ, ինչպես նաև Հայաստանում ոռոգելի հողատարածքների ընդլայնմանն ու բերքատվության բարձրացմանը միտված այնպիսի նշանակալից աշխատանքներ, ինչպիսիք էին Էվջիլարի⁶ [21, էջ 358] և Շիրակի⁷ [22, էջ 133] ջրանցքների կառուցումը, Արարատյան դաշտի ճահիճների չորացումը [10, էջ 49-51]:

ՀՕԿ-ի ուշադրությունից չեն վրիպել նաև նախադպրոցական հաստատությունները: Կառուցվել ու կահավորվել են մանկապարտեզների ու մանկամսուրների նոր շենքեր, հագուստ և սննդամթերք տրամադրվել նրանց [19, էջ 202]:

1922 թ. ՀՕԿ-ի նախագահությանն է փոխանցվում Զանգիբասարի շրջանի Իմանշալու (այժմ՝ գյուղ Մխչյան) և Ուլուխանլու (այժմ՝ Մասիս քաղաք) գյուղերի դպրոցների վերանորոգման ծախսերի նախահաշիվը՝ խնդրելով տրամադրել 1816 ռուբլի: Խնդրանքը բավարարվում է, և վերոհիշյալ գյուղերի դպրոցները վերանորոգվում են:

1922–1923 թթ. ՀՕԿ-ը պարբերաբար հագուստի և գրենական պիտույքների տեսքով օգնություն է տրամադրել Աշտարակի և Օշականի պետական դպրոցներին, օժանդակել Կոշ գյուղի դպրոցի կառուցմանը: 1923–1924 թթ. ՀՕԿ-ը մեծաքանակ ապրանքներ ու դրամական օգնություն է տրամադրել Հանրային գրադարանին, Երևանի համալսարանին, մեծահասակների արհեստանոցին, անապաստան երեխաներին, Ապարանի չքավոր գյուղացիությանը, Զանգեզուրի ու Ղարաբաղի լուսբաժիններին, այլևայլ կրթամշակութային հիմնարկների [23; 10, էջ 47]: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը ձգտում էր

⁶Կոչվել է Էվջիլար (այժմ՝ Արագածի, ՀՀ Արմավիրի մարզ) գյուղի անունով: Ջրանցքը սկիզբ է առնում Արաքս գետից և ոռոգում հիմնականում Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի հողերը:

⁷Ջրանցքը սկիզբ է առնում Ախուրյան գետից՝ ՀՀ Շիրակի մարզի Կապս գյուղի մոտակայքից: Կառուցվել է 1922-1925 թթ.: Ոռոգում է Շիրակի մարզի շուրջ 9,8 հզ. հա հողատարածք: Ջրանցքի բացման հանդիսավոր արարողությանը (1925 թ. հունիսի 21) մասնակցել է նաև նորվեգացի նշանավոր բնեռախույզ, գիտնական, հասարակական գործիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը:

հնարավորության սահմաններում աջակցել նաև Ղարաբաղի հայությանը: Ուշագրավ է, որ ՀՕԿ-ը, փաստորեն, Ղարաբաղը համարում էր Խորհրդային Հայաստանի անբաժան մաս և օգնություն էր տրամադրում նաև Ղարաբաղի դպրոցներին: 1920 թ. նոյեմբերի 10-ին կայացած ՀՕԿ-ի գլխավոր վարչության նիստի արձանագրությունից պարզվում է, որ Ղարաբաղի դպրոցների կարիքները հոգալու համար տրամադրվել են մեծաքանակ գրենական պիտույքներ [19, էջ 198]:

Այսպիսով՝ նշանակալի է Հ. Թումանյանի ավանդը ՀՕԿ-ի կայացման և կազմակերպության նպատակների արդյունավետ իրականացման գործում: Հ. Թումանյանի նախագահության տարիներին ՀՕԿ-ը, իր առջև դրված նպատակների իրականացման շրջանակներում, աշխատանքներ է տարել կարիքավոր բնակչության համար պարեն, հագուստ, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ձեռք բերելու և բաշխելու համար, Սփյուռքի և Հայրենիքի միջև կապերը ամրապնդելու, Խորհրդային Հայաստանում շինարարական ու մշակութային ձեռնարկումներ իրականացնելու, հայրենադարձության կազմակերպման, հայրենադարձների համար հայրենիքում նոր ավանների ու բնակավայրերի շինարարության ուղղությամբ: Փաստորեն, ՀՕԿ-ը մեծապես նպաստել է Հայաստանի վերականգնմանն ու վերելքին, տնտեսական, գիտական և կրթամշակութային կյանքի աշխուժացմանն ու զարգացմանը, նպաստել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, շինարարական աշխատանքների ծավալմանը, սովի ու համաճարակների հետևանքների հաղթահարմանը, գրագիտության տարածմանը, մշակույթի պահպանմանն ու զարգացմանը:

Հ. Թումանյանը, անտեսելով իր վատառողջ ու տկար վիճակը, շարունակում էր օգնել հայրենիքին: Ամբողջ գիտակցական կյանքում մեծ հումանիստը հավատարիմ մնաց իր իսկ պատգամին և ստեղծած-ավանդածով, վարք-վարմունքով ապացուցեց, որ գո՛րծն է անմահ: Այո՛, նա իր գործով ապրելու է դարեդար: Նա հավերժացավ իր կենսուրախ ու շենշող վերաբերմունքով՝ մինչև վերջին շունչը լույս ու ջերմություն սփռելով ամենուրեք, լույսով ու բարությամբ օժտելով, սրտապնդել-մխիթարելով («դոչաղ կացեք») իրեն շրջապատողներին: Միով բանիվ՝ Թումանյանը համայն մարդկությանն է, նա հանճար է, որ չունի ազգություն: Նա Մարդ էկավ, մարդկության ու մարդկայնության համար ապրեց ու արարեց ու Մարդ գնաց անարատ:

2. Հայկական հարց հանրագիտարան, Երևան: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն: 1996: 527 էջ:
3. Լեո Անցյալից: Հուշեր, թղթեր: դատումներ, Թիֆլիս: «Խորհրդային Կովկաս» հրատ.: 1925: 480 էջ:
4. Լեո Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը: Հ. 2: Փարիզ, տպ. Պահրի եղբարց: 1935: 262 էջ:
5. Կիրակոսյան Ջ. Ս. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.: Երևան: «Հայաստան» հրատ.: 1967: 557 էջ:
6. Մելիքյան Վ. Հ. Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը և հայկական ազգային խորհուրդների ստեղծումը (1916 թ. մարտ – 1917 թ. հոկտեմբեր) // Լրաբեր Հասարակական Գիտությունների: 1989: № 6: էջ 39-48:
7. Հորիզոն: Թիֆլիս: 22 ապրիլի: 1917: № 81:
8. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ): Ֆոնդ 113: Ցուցակ 38: Գործ 2: Թերթ 17:
9. ՀՄԽՀ ղեկերտների և որոշումների հավաքածու: 1921օգոստոսի 15 - 1921 նոյեմբեր-դեկտեմբերի համարներ: № 9: 5 հոկտեմբեր, 1921 թ.:
10. Մակարյան Լ. Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921-1937 թթ.): Երևան: «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի հրատ.: 2018: 382 էջ:
11. Թումանյան Հ. Հայաստանի Օգնության Կոմիտեների առիթով // Հայաստանի օգնության կոմիտե (միօրյա թերթ): 16 հոկտեմբեր, 1921:
12. Կարմիր աստղ: Թիֆլիս: 29 սեպտեմբեր: 1921: № 172:
13. Խորհրդային Հայաստան (օրաթերթ): Երևան: 20 սեպտեմբեր, 1921: № 182:
14. Թումանյան Հ. Երկերի լիակատար ժողովածու: Տասը հատորով: Հատոր յոթերորդ: Քննադատություն և հրապարակախոսություն (1913-1922): Երևան: ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ.: 1995: 718 էջ:
15. Թումանյանը Ժամանակակիցների հուշերում (Կարապետյան Լուսիկ Մ.: Ինճիկյան Արամ Մ.: Հակոբյան Պիոն Հ.: ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1969: 1000 էջ:
16. Կարապետյան Լ. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ): Երևան: ՀՀ ԳԱ հրատ.: 1992: 256 էջ:
17. ՀԱԱ: Ֆոնդ 178: Ցուցակ 1: Գործ 1: Թերթ 6 և շրջերես:

18. Թումանյան Հ. Երկերի ժողովածու չորս հատորով: Կ. 4: Քննադատություն և հրապարակախոսություն, Նամակներ, Երևան, «Հայաստան» հրատ.: 1969: 487 էջ:
19. Կեսոյան Է. Հայաստանի օգնության կոմիտեի կրթամշակութային գործունեությունը Հայաստանում // Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես: 2017: էջ 197-206:
20. Դոլուխանյան Լ. Կ. Հայաստանի օգնության կոմիտեի 1920-1930-ական թթ. շինարարական գործունեության մասին // Լրաբեր Հասարակական Գիտությունների: № 2: էջ 169-176:
21. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (կազմողներ՝ Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան): Հտ. 2: Երևան: ԵՊՀ հրատ.: 1988: 992 էջ:
22. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (կազմողներ՝ Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան): Հտ. 4: Երևան: ԵՊՀ հրատ.: 1998: 812 էջ:
23. ՀԱԱ: Ֆոնդ 112: Ցուցակ 1: Գործ 121: Թերթ 35 շրջերես:

Տեղեկություններ հեղինակի մասին

Մալոյան Ա. Մ. – պատմական գիտությունների թեկնածու
«Եվրոպական համալսարան» հիմնադրամի Բջջանի մասնաճյուղ
Էլ. փոստ՝ armanmaloyan@mail.ru, armanmaloyan1976@gmail.com

Տրվել է խմբագրություն 12.10.2019